

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2021-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Պետական գույքի կառավարման 2021-2023 թվականների ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) կատարման մասին սույն հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացվում է «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 5-րդ մասի և Կառավարության 2021 թվականի ապրիլի 1-ի N 458-Լ որոշման 26-րդ կետի համաձայն:

2. Հաշվետվությունն ընդգրկում է 2023 թվականի օրացուցային տարին (այսուհետ՝ հաշվետու ժամանակաշրջան):

3. Հաշվետվությունը ներկայացվում է որպես հաշվետու ժամանակաշրջանում պետական գույքի կառավարման ոլորտում իրականացված միջոցառումների և դրանց արդյունքների ամփոփում: Միաժամանակ, Ծրագրով պետական մասնակցությամբ ընկերությունների մասնավորեցման և անշարժ գույքի օտարման գործարքներից դրամական մուտքերի կանխատեսումներ նախատեսված չեն, ուստի Ծրագրի 2022-2023 թվականների ընթացքում մասնավորեցման, օտարման և օգտագործման տրամադրման արդյունքները և դրամական մուտքերը գնահատելու համար կից ներկայացվում է գեներացված եկամտային հոսքերի վերաբերյալ 2022-2023 թվականների դրամական մուտքերի համեմատականը.

NN Ը/կ	Ընկերությունների (գույքի) մասնավորեցման ձևը	2022-2023 թթ. մասնավորեցվել են	2022	2023
			մասնավորեցվել են	մասնավորեցվել են

1.	Ուղղակի վաճառք	2	1	1
2.	Աճուրդ	2	2	-
3.	Մրցույթ	1	-	1
Ընդամենը		5	3	2
Անշարժ գույքի օտարում		2022-2023 թթ. օտարվել են	2022 օտարվել են	2023 օտարվել են
		55	17	38

NN ը/կ	Վաճառքի ձևը	Ընդամենը 31.12.2022 թ. (հազ. դրամ)	Ընդամենը 31.12.2023 թ. (հազ. դրամ)	Տարբերություն (հազ. դրամ)	Աճը կամ նվազեցումը 2022 թվականի համեմատ տոկոսով %
	Ընդամենը մուտքեր, այդ թվում՝	8,940,727.9	15,390,797.1	6,450,069.2	72.14%
	պետական բյուջեի մուտքեր	7,609,829.4	12,889,242.9	5,279,413.5	69.38%
	համայնքային բյուջեի մուտքեր	1,091,244.8	2,287,389.0	1,196,144.2	109.61%
	ՊՈԱԿ-ներ	239,653.7	214,165.2	-25,488.5	-10.64%
1	Պետական գույքի՝ այդ թվում նաև հողի օտարումից մուտքեր ընդամենը, այդ թվում՝	7,306,581.0	10,638,138.8	3,331,557.8	45.60%
	պետական բյուջե	6,453,597.3	9,467,474.8	3,013,877.5	46.70%
	համայնքային բյուջե	852,983.7	1,170,664.0	317,680.3	37.24%
2	Պետական գույքի մասնավորեցումից մուտքեր ընդամենը, այդ թվում՝	845,281.2	3,790,321.6	2,945,040.4	348.41%
	պետական բյուջե	607,020.1	2,673,596.6	2,066,576.5	340.45%
	համայնքային բյուջե	238,261.1	1,116,725.0	878,463.9	368.70%
3	Պետական գույքի վարձակալությունից մուտքեր	470,288.7	673,351.4	203,062.7	43.18%
4	Շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման վարձավճարից մուտքեր ընդամենը, այդ թվում՝	318,577.0	288,985.3	-29,591.7	-9.29%
	պետական բյուջե	78,923.3	74,820.1	-4,103.2	-5.20%
	ՊՈԱԿ-ներ	239,653.7	214,165.2	-25,488.5	-10.64%

3.1 Պետական գույքի՝ այդ թվում՝ նաև հողի օտարումից մուտքերի ընդամենը գումարում ներառված չեն համաձայն Կառավարության 2023 թվականի հուլիսի 27-ի N 1274-Ն և 2023 թվականի ապրիլի 21-ի N 590-Ն որոշումներով «Ջրառ» փակ

բաժնետիրական ընկերության համապատասխանաբար 12,156,314.1 հազ. դրամ և 7,236.4 հազ. դրամ կանոնադրական կապիտալի ավելացումները, որոնց ծախսագրումները կատարվել են համապատասխան լիազոր մարմնի և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:

4. Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված միջոցառումներն ուղղված են եղել Ծրագրով սահմանված նպատակների իրագործմանը

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5. 2023 թվականի ընթացքում Կոմիտեի կողմից պետական գույքի կառավարման առանձին բնագավառներում իրականացվել են պետական գույքի կառավարման բարեփոխման աշխատանքներ, մասնավորապես՝ պետական գույքային հարաբերությունների կանոնակարգման և շարունակական բարեփոխման նպատակով Կոմիտեի կողմից 2023 թվականին մշակվել և օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունվել են հետևյալ իրավական ակտերը՝

1) Կառավարության կողմից 2023 թվականի հունիսի 22-ին ընդունվել է՝ «ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 1-ի N 458-Լ որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» N 1036-Լ որոշումը, ինչի արդյունքում՝ Ծրագրի N 5 ցանկը համալրվել է թվով 136 գույքով: Նշված որոշման ընդունումը նպատակաուղղված է եղել Ծրագրով նախատեսված պետական գույքի մասնավորեցման, օտարման և օգտագործման տրամադրման յուրաքանչյուր խոշոր միջոցառման ծրագրային կառավարման իրականացման խնդրի լուծմանը.

2) մշակվել և Ազգային ժողովի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 25-ին ընդունվել է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» N ՀՕ 315-Ն օրենքը, որով կանոնակարգվել է համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին Կառավարության կողմից անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ցանկացած գույք ամրացվելու գործընթացը.

3) մշակվել և Կառավարության կողմից 2023 թվականի մայիսի 11-ին ընդունվել է «Պետական գույքի կառավարման 2021-2023 թվականների ծրագրի կատարման 2022 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» N 727-Ա որոշումը.

4) մշակվել և Կառավարության կողմից 2023 թվականի մարտի 16-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 7-ի N 515-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 321-Ն որոշումը, որով սահմանվել է Կառավարության լիազորող նորմը.

5) մշակվել և Կառավարության կողմից 2023 թվականի ապրիլի 21-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 587-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 594-Ն որոշումը, որով կանոնակարգվել է պետական սեփականություն հանդիսացող կառուցապատված հողամասերի օպտիմալացման արդյունքում առանձնացված չկառուցապատված հողամասերի օտարման բնագավառում առաջացող իրավահարաբերությունները, ինչպես նաև ապահովվել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի, «Պետական գույքի կառավարման մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներին համապատասխանեցումը.

6) մշակվել և Կառավարության կողմից 2023 թվականի ապրիլի 21-ին ընդունվել է «Պետական գույքի անհատույց օգտագործման տրամադրման կարգը և պայմանները սահմանելու մասին» N 595-Ն որոշումը, որով սահմանվել են պետական գույքը (տարածքները) անհատույց օգտագործման տրամադրելու ժամկետները, պայմանները, ինչպես նաև գործարար և գույքի բարելավման ծրագրերի օրինակելի ձևերը: Նշված որոշման ընդունումը նպատակաուղղված է եղել Ծրագրով նախատեսված պետական գույքի մասնավորեցման, օտարման, երկարաժամկետ և կարճաժամկետ վարձակալության գործընթացում արդիական գործիքակազմի կիրառումը, անհատույց օգտագործման տրամադրման ընթացակարգերի պարզեցումը, հավասար պայմանների սահմանումը, վարչարարության կրճատումը, գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովումը խնդրի լուծմանը.

7) մշակվել և Կառավարության կողմից 2023 թվականի մայիսի 25-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 562-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 829-Ն որոշումը, որի ընդունմամբ ոչ միայն բարելավվել է հաշվառման օպերատիվությունը և բարձրացել է հավաստիության մակարդակը, այլ նաև ավելանալու է համակարգից օգտվողների թվաքանակը և այն կդառնա ավելի մատչելի և դինամիկ: Հաշվառման համակարգը հնարավորություն է ընձեռել ծառայողական տրանսպորտային միջոցների վերաբերյալ ստանալ մանրամասն տեղեկություններ: Նշված որոշման ընդունումը նպատակաուղղված է եղել Ծրագրով նախատեսված պետական գույքի պարբերական գույքագրումը և ամբողջական հաշվառման իրականացումը, հաշվառման պետական սեփականություն հանդիսացող գույքի տվյալների թափանցիկության և հրապարակայնության ապահովումը նպատակի և պետական գույքի հաշվառման քննազավառում արդիական միջոցների ներդրումը և հանրությանը հաշվառման տվյալները հասանելի դարձնելը խնդրի լուծմանը.

8) մշակվել և Կառավարության կողմից 2023 թվականի սեպտեմբերի 28-ին ընդունվել է «Հանրային իշխանության մարմինների (բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների) և պետական ոչ առևտրային կազմակերպությունների պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկող ավտոմեքենաների հատկացման ու շահագործման, պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը, առանձին մարմիններին հատկացվող ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների սահմանաքանակները, ավտոմեքենաների վառելիքի, յուղերի ու քսուքների ծախսի, ավտոդողերի վազքի, կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների նորմաները, պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկելու նպատակով ձեռք բերվող ավտոմեքենաների առանձին չափորոշիչները հաստատելու մասին» N 1666-Ն որոշումը: Նշված որոշման ընդունումը նպատակաուղղված է եղել Ծրագրով նախատեսված պետական գույքի

կառավարման ընագավառում միասնական քաղաքականության մշակումը և իրականացումը նպատակի և չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող պետական գույքը տնտեսական շրջանառության մեջ դնելու աշխատանքների իրականացումը խնդրի լուծմանը.

9) մշակվել և Կառավարության կողմից 2023 թվականի սեպտեմբերի 28-ին ընդունվել է «Պետական գույքի օտարման և վարձակալության տրամադրման նպատակով էլեկտրոնային համակարգի միջոցով աճուրդի անցկացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 395-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1667-Ն որոշումը՝ նպատակն է. պետական գույքի օտարման էլեկտրոնային աճուրդների իրականացման համակարգի բարեփոխումը, որի արդյունքում կբարձրանա պետական գույքի վաճառքի կազմակերպումը: Նշված որոշման ընդունումը նպատակաուղղված է եղել Ծրագրով նախատեսված պետական գույքի կառավարման ոլորտում պետություն-մասնավոր հատված փոխշահավետ գործընկերության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և համագործակցության նոր ձևաչափի ներդրումը նպատակի և պետական գույքի մասնավորեցման, օտարման, երկարաժամկետ և կարճաժամկետ վարձակալության գործընթացում արդիական գործիքակազմի կիրառումը, անհատույց օգտագործման տրամադրման ընթացակարգերի պարզեցումը, հավասար պայմանների սահմանումը, վարչարարության կրճատումը, գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովումը խնդրի լուծմանը:

III. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

6. Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) կառավարման համակարգի կատարելագործման, դրանց կողմից տնօրինվող գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման համար Ծրագրով նախատեսվել էր հստակեցնել կազմակերպությունների գույքի կազմն ու կառուցվածքը և, միաժամանակ, օպտիմալացնել այդ կազմակերպությունների քանակը: Ինչի հետ կապված՝

պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման համակարգի կատարելագործման, դրանց կողմից տնօրինվող գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով շրջանառության մեջ է դրվել Կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է «Հատուկ լեռնափրկարար ծառայություն», «Հրազդանի մարզահամալիր», «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲ և «Երևանի ջրամատակարարման ուղեմաս» ԲԲ ընկերությունների բնականոն գործունեությանը չմասնակցող գույքն առանձնացնել և ամրացնել Կոմիտեին, իսկ ընկերությունները հետագայում մասնավորեցնել: Միաժամանակ, Ծրագրով նախատեսված պետական գույքի մասնավորեցման բնագավառում առավել արդյունավետ մասնավորեցման ձևերի կիրառում, մասնավորապես, ֆոնդային բորսայի միջոցով պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի վաճառքի կազմակերպում խնդրի լուծման նպատակով Կառավարության 2023 թվականի օգոստոսի 17-ի N 1404-Ա որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ ք.Երևան, Նալբանդյան 28 հասցեում գտնվող 7809,9 ք/մ մակերեսով շենքի և դրա զբաղեցրած 0,262 հա հողամասի ներդրմամբ հիմնադրվել է «Ռիփարիք Պլազա» ԲԲ ընկերությունը, որի արդյունքում էլ Պետական գույքի կառավարման ոլորտում պետություն-մասնավոր հատված փոխշահավետ գործընկերության նպատակի շրջանակներում նախատեսվում է ոչ պետական միջոցների ներգրավմամբ իրականացնել ք.Երևան, Նալբանդյան 28 հասցեի շենքի գրավչության բարձրացմանն ուղղված խոշոր ներդրումային ծրագրեր:

6.1 Ծրագրով նախատեսված Պետական ոչ առևտրային կազմակերպությունների և պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների լուծարման գործընթացի արդյունավետ իրականացման նպատակով պետական ոչ առևտրային կազմակերպությունների լուծարման գործընթացի կազմակերպումը միասնական ձևով վերապահվում է Կոմիտեին: 2021-2023 թվականների ընթացքում՝ Կառավարության կողմից ընդունվել է 8

իրավաբանական անձի (5՝ բաժնետիրական ընկերություն, 3՝ ՊՈԱԿ) լուծարման մասին որոշում, որոնց լուծարման գործընթացի կազմակերպումը վերապահվել է Կոմիտեին: Նույն ժամանակահատվածում 13 իրավաբանական անձ (6՝ բաժնետիրական ընկերություն, 7՝ ՊՈԱԿ) լուծարման գործընթացն ավարտվել է, 4 իրավաբանական անձ (3՝ բաժնետիրական ընկերություն, 1՝ ՊՈԱԿ) ճանաչվել է սնանկ: Նշված ժամանակահատվածում Կոմիտեի կողմից կազմակերպվել է նաև դատարանի վճիռներով լուծարման գործընթացում գտնվող 4 հիմնադրամների լուծարման գործընթաց, որոնցից 3-ի լուծարման գործընթացն արդեն ավարտվել է:

6.2 Հավելվածի 6-րդ կետով սահմանված Պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունների կառավարման համակարգի կատարելագործման, դրանց կողմից պետական գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների գույքի կազմի ու կառուցվածքի հստակեցման և, միաժամանակ, այդ կազմակերպությունների քանակի օպտիմալացման նպատակով ամբողջությամբ բարեփոխվել է Կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշումը, որի արդյունքում ներկայումս քննարկվում է դրանցից ևս թվով 22 ընկերություններն ընդգրկել մասնավորեցման ծրագրում, թվով 8-ը՝ լուծարել, և թվով 5-ը՝ վերակազմակերպել:

7. Ծրագրի հավելված N 2-ի N 1՝ «Մասնավորեցման ծրագրում չընդգրկված՝ լուծարման առաջարկվող պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունների» ցանկով նշված միջոցառումներ առկա չեն:

8. Ծրագրի հավելված N 2-ի N 2՝ «Վերակազմակերպման առաջարկվող՝ պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունների» ցանկով նշված միջոցառումներ հաշվետու ժամանակահատվածում առկա չեն:

9. Ծրագրի հավելված N 2-ի N 3՝ «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության

պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը հանձնվող՝ չօգտագործվող կամ ըստ նպատակային նշանակության չօգտագործվող կամ մասնակիորեն օգտագործվող պետական գույքի» ցանկով նախատեսված 2023 թվականին կատարվել է հետևյալը՝

1) Ծրագրի հավելված N 2-ի ցանկ N 3-ում ներառված անշարժ գույքից՝ 6-րդ, 7-րդ և 10-րդ կետերով նշված թվով 3 գույքերը (Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի գ. Արծևանիկի հիվանդանոցի շենքը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լեռնաձոր համայնքի Քաջարանի ԲԿ-ի շենքը և «Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ-ի նախկին շենքը, Բանակի 8 գ-1) Կոմիտեի տնօրինությանը հանձնված չեն՝ իրավունքների պետական գրանցման վկայականի անհամապատասխանության պատճառով, իսկ նշված ցանկում ընդգրկված մնացած անշարժ գույքերը օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնվել են Կոմիտեի տնօրինությանը.

2) Ծրագրի հավելված N 1-ի 13-րդ կետի համաձայն՝ Կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշման կատարման շրջանակներում Կոմիտեի տնօրինությանն է հանձնվել 19 միավոր անշարժ գույք:

10. Հաշվետու ժամանակաշրջանում «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքով հաստատված հավելված N 1-ի ցանկում՝ այդ թվում Ծրագրի հավելված N 2-ի N 4՝ «Մասնավորեցման ծրագրում ընդգրկված՝ չմասնավորեցված (չլուծարված) առևտրային կազմակերպությունների և այլ օբյեկտների մասնավորեցման և /կամ լուծարման առաջարկելու ժամկետների» ցանկում ընդգրկված ընկերություններից՝

1) մասնավորեցման են ներկայացվել հետևյալ ընկերությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը՝

ա. «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ 100 % պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը Կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի N 1882-Ա որոշմամբ մասնավորեցվել են մրցույթով,

բ. «Ավտոմատիկա» ՓԲԸ-ների 80 % պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը Կառավարության 2023 թվականի մայիսի 4-ի N 651-Ա որոշմամբ մասնավորեցվել է ուղղակի վաճառքի ձևով,

գ. «Հատուկ լեռնափրկարար ծառայություն» ՓԲԸ-ի 100 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի աճուրդով մասնավորեցման մասին ընդունվել են Կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 158-Ա որոշումը (մեկնարկային գին սահմանելով գնահատված արժեքի 100 %-ը) և Կառավարության 2023 թվականի հունիսի 22-ի N 996-Ա որոշումը (մեկնարկային գին սահմանելով գնահատված արժեքի 75%-ը), սակայն աճուրդները չեն կայացել՝ գնորդ չլինելու պատճառով.

2) Հաշվետու ժամանակահատվածում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության նախաձեռնությամբ Ծրագրում կատարվել է հետևյալ փոփոխությունը՝ «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2023 թվականի փետրվարի 10-ի ՀՕ-29-Ն օրենքով Ծրագրի 1-ին հավելվածի «Հայաստանի Հանրապետության առողջապահություն նախարարություն» բաժնից հանվել է «Ռադիոհիգուտոպների արտադրության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (ծածկագիր՝ 90075): Կառավարության 30.03.2023թ. թիվ 419-Ա որոշման համաձայն «Ռադիոհիգուտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ի 100 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը:

11. Հաշվետու ժամանակահատվածում օտարման են ներկայացվել 70 անվանում անշարժ գույք (այդ թվում՝ Ծրագրի N 2 հավելվածի N 5 ցանկում ընդգրկված), որոնցից օտարվել է 38 անվանում անշարժ գույք, որոնցից 24-ը՝ Ծրագրի N 2 հավելվածի N 5՝ «Մասնավորեցման ծրագրում չընդգրկված, օտարման առաջարկվող անշարժ գույքի և անշարժ գույքի, որի՝ պետությանը պատկանող գույքային իրավունքներն առաջարկվում է փոխանցել իրավաբանական ու ֆիզիկական անձանց» ցանկում ընդգրկված, իսկ ցանկի 35-րդ կետում

նշված՝ ք. Երևան, Սեբաստիայի փողոց թիվ 7 հասցեում գտնվող «Լուսանշան» ՊՈԱԿ-ի նախկին գրասենյակի շենքը տրվել է վարձակալության՝

1) Ծրագրի հավելված N 1-ի 18-րդ և 20-րդ կետերով սահմանված անշարժ գույքի օտարման վերաբերյալ միջոցառումների կատարողականի մասին տեղեկատվությունը ներկայացված է հավելվածի NN 1 և 2 ցանկերով:

12. Ծրագրի հավելված N 2-ի N 6՝ «Պետական գույքի վարձակալությունից սպասվելիք մուտքերի վերաբերյալ» ցանկով՝ 2023 թվականին պետական բյուջե Ծրագրով կանխատեսվող (սպասվելիք) դրամական մուտքերը սահմանվել են՝ 130,000.0 հազ. դրամ, մինչդեռ, 2023 թվականին պետական բյուջե է մուտքագրվել՝ 673,351.4 հազ. դրամ: Այլ կերպ՝ կատարողականը կազմել է 518 %:

13. Ծրագրի հավելված N 2-ի N 7՝ «Պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների (այսուհետ՝ ալեհավաք) տեղակայման և սպասարկման վարձավճարների սպասվելիք (կանխատեսվող) մուտքերի վերաբերյալ» ցանկի նախատեսվածի կատարողականը հետևյալն է՝ ալեհավաքների տեղակայման և սպասարկման ծառայություններից վարձավճարները Ծրագրով 2023 թվականի համար կանխատեսվող դրամական մուտքերը սահմանվել են 279,000.00 հազ. դրամ, որից պետական բյուջե սպասվելիք դրամական մուտքերը՝ 79,000.00 հազ. դրամ, մինչդեռ, 2023 թվականին այն կազմել է 288,985.30 հազ. դրամ, որից պետական բյուջե փոխանցվել է 74,820.1 հազ. դրամ: Այլ կերպ, կատարողականը կազմել է համապատասխանաբար՝ 103 % և 94 %:

14. Ծրագրի հավելված N 2-ի N 8՝ «Մասնավորեցված, օտարված, նվիրաբերված, վարձակալությամբ, ինչպես նաև անհատույց օգտագործման իրավունքով տրված օբյեկտների գնորդների, նվիրատուների, վարձակալների և օգտագործողների կողմից ծրագրային ժամանակահատվածի ընթացքում ստանձնած ներդրումային պարտավորությունները» ցանկում ընդգրկված, գնորդների կողմից պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ցանկ N3-ով:

Հաշվետու ժամանակահատվածում՝ կից Ցանկ N3-ով ներկայացված պարտավորությունների մասով՝ 27 պայմանագրերով ստանձնած պարտավորությունները կատարվել են, 1 պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ փաստաթղթերը գտնվում են դեռևս ուսումնասիրման փուլում, քանի որ տեղում իրականացվելու է տեղատեսություն, 2 պայմանագրով նախատեսված պարտավորություն չի կատարվել, իսկ 1 պայմանագրով նախատեսված պարտավորություն գտնվում է դատական գործընթացում:

15. Ծրագրի հավելված N 3-ի ցանկում ընդգրկված կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերլուծության հետ կապված՝ Ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման մասով Կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1) Կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 1262-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ իրականացվել է Կազմակերպությունների արդյունավետության որոշում և գործադիր մարմինների ղեկավարների կատարած աշխատանքի գնահատում: Գնահատման համար հիմք է հանդիսանում պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկատվությունը: Կազմակերպությունները որոշվում և գործադիր մարմինների ղեկավարների կատարած աշխատանքը գնահատվում է ելնելով Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տարեկան միջին տոկոսադրույքից, որը 2022 թվականի համար կազմել է 9,708 և ըստ իրացման ծավալի կամ ըստ ոչ ընթացիկ ակտիվների շահութաբերության մակարդակից և լրացուցիչ ֆինանսական ցուցանիշների դրական դինամիկայից:

2) Վերլուծության ենթարկված և գործունեություն իրականացրած 139 կազմակերպությունից՝ 19 (13.67%) կազմակերպության արդյունավետության և գործադիր մարմինների ղեկավարների աշխատանքները գնահատվել են դրական, 7 (5.04 %) կազմակերպությանը՝ բավարար, 37 (26.62%) կազմակերպությանը՝ պայմանական բավարար և 76 (54.67%) կազմակերպությանը՝ անբավարար:

3) Կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 1262-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածով՝ «Պետական կառավարման մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ անցկացնելու, դրանց գործունեությունը վերլուծելու և արդյունքներն ամփոփելու» կարգի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն 2022 թվականի տարեկան տվյալների հիման վրա մոնիտորինգ է իրականացրել 139 Կազմակերպությունների համար.

4) Մոնիթորինգի ենթարկված 139 Կազմակերպությունից՝ 91 Կազմակերպություն (65,47%) աշխատել են շահույթով, 43 Կազմակերպություն (30,93%) աշխատել են վնասով, 5 Կազմակերպություն (3,6%) շահույթ (վնաս) չեն ձևավորել.

5) 2022 թվականի գործունեության արդյունքում վնասով աշխատած Կազմակերպությունների կողմից ձևավորված վնասը կազմել է 7,274,509. 41 հազ. դրամ, ընդ որում 2021 թվականի արդյունքներով՝ վնասը կազմել է 7,295,623. 7 հազ. դրամ: Այսինքն, 2022 թվականին 2021 թվականի համեմատ վնասը նվազել է 21,114.3 հազ. դրամ (0.29%).

6) Համաձայն ներկայացված տեղեկատվության վնասը նախորդ տարվա համեմատ նվազել է հիմնականում՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կազմակերպություններում՝ 2,831,259.1 հազ. դրամ, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի Կազմակերպություններում՝ 14,504.7 հազ. դրամ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կազմակերպություններում՝ 35,998.8 հազ. դրամ, Հանրային հեռարձակողի խորհրդի կազմակերպություններում՝ 18,996.0 հազ. դրամ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կազմակերպություններում՝ 7,794.3 հազ. դրամ, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Լոռու, Վայոց ձորի մարզպետների աշխատակազմերի

ենթակայության կազմակերպություններում՝ համապատասխանաբար՝ 1,085.0 հազ. դրամ, 389,186.1 հազ. դրամ, 126,082.9 հազ. դրամ: Դրան հակառակ՝ վնասը նախորդ տարվա համեմատ ավելացել է հիմնականում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Կազմակերպություններում՝ 166,436.3 հազ. դրամ, Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության ենթակայության Կազմակերպություններում՝ 63,920.0 հազ. դրամ, Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Կազմակերպություններում՝ 737,664.4 հազ. դրամ, Հայաստանի Հանրապետության ջրային կոմիտեի Կազմակերպություններում՝ 2,155,445.0 հազ. դրամ, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի, Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Հայաստանի Հանրապետության Շիրակի և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանների Կազմակերպություններում՝ համապատասխանաբար 94,888.5 հազ. դրամ, 48,252.3 հազ. դրամ, 43,253.6 հազ. դրամ և 55,207.7 հազ. դրամ.

7) 2022 թվականի տարեկան տվյալներով շահույթով աշխատած կազմակերպությունների զուտ շահույթը կազմել է 73,005,934. 90 հազ. դրամ, ընդ որում, 2021 թվականի արդյունքներով՝ Կազմակերպությունների կողմից ձևավորած զուտ շահույթը կազմել է 35,718,041. 33 հազ. դրամ: Այսինքն, 2022 թվականին 2021 թվականի համեմատ զուտ շահույթը աճել է 37,287,881.57 հազ. դրամ (104%): 2022 թվականին զուտ շահույթի ձևավորման մեջ գերակշիռ մաս է կազմում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի, Երևանի քաղաքապետարանի՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ձևավորած զուտ շահույթը.

8) 2022 թվականի տարեկան տվյալներով՝ Կազմակերպությունների արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 215,929,300. 00 հազ. դրամ, աշխատակիցների թիվը կազմել է 25956 մարդ:

16. Ծրագրում ընդգրկված պետական գույքի մասնավորեցման գործարքների իրականացման արդյունքում դրամական մուտքերը 2023 թվականին կազմել են՝ 3,790,321.6 հազ. դրամ, այդ թվում. պետական բյուջեի ՀՀ պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհումից մուտքեր թիվ 900008097047 հաշվին՝ 2,673,596.6 հազ. դրամ, համայնքային բյուջե՝ 1,116,725.0 հազ. դրամ:

17. Պետական գույքի օտարման գործարքների հետ կապված միջոցառման իրականացում: Նշված միջոցառման իրականացման նպատակով՝ հաշվետու ժամանակաշրջանում՝ պետական անշարժ գույքի օտարումից մուտքերը կազմել են՝ 16,555,141.2 հազ. դրամ, որից. պետական բյուջե՝ 15,384,477.2 հազ. դրամ, համայնքային բյուջե՝ 1,170,664.0 հազ. դրամ:

18. Բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման և կացարանով ապահովման ուղղությամբ Կոմիտեի կողմից իրականացվում է պետական սեփականություն համարվող հանրակացարանային բնակելի տարածքների նվիրատվության և սեփականաշնորհման գործընթացը, որի նպատակն է բնակչության բնակարանային պայմանների բարելավումը և, սեփականության իրավունքի հաստատումով, սոցիալական և կենցաղային խնդիրների լուծումը: Այսպես, հաշվետու ժամանակահատվածում՝ բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, այդ նպատակով պետական սեփականություն համարվող հանրակացարանային տարածքների նվիրատվության և սեփականաշնորհման գործընթացի ավարտման գործընթացի ուղղությամբ նվիրատվությամբ (անհատույց սեփականաշնորհմամբ) ընդհանուր թվով տրամադրվել են՝ 29 բնակելի տարածքներ՝ 23 ընտանիքներին (64 անձանց), որից՝

1) Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 404 որոշման պահանջների համաձայն՝ Կոմիտեի կողմից մշակվել և Կառավարության կողմից ընդունվել են «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց կողմից

զբաղեցրած բնակելի տարածքները սեփականաշնորհելու մասին» Կառավարության թվով 2 որոշումներ, որոնցով առաջարկվել են թվով 7 բնակելի տարածքներ սեփականաշնորհել այնտեղ բնակվող 6 ընտանիքներին (13 անձանց)։

2) Կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշման պահանջների համաձայն՝ Կոմիտեի կողմից նախապատրաստվել և Կառավարության կողմից ընդունվել են Կառավարության թվով 4 որոշումներ, որոնցով առաջարկվում են նվիրատվությամբ տրամադրել 22 բնակելի տարածքներ՝ 17 ընտանիքներին (51 անձանց)։

3) Միաժամանակ, Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 2146-Ա որոշմամբ նվիրատվությամբ տրամադրվել են նաև Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի Բաղրամյան N 43 և Գարեգին Նժդեհի N 7 հասցեներում գտնվող վթարային շենքերում բնակվող և բնակարանային ապահովման կարիք ունեցող ՀՀ քաղաքացիներին 43 բնակելի տարածքներ՝ 43 ընտանիքներին (116 անձանց)։

Ց Ա Ն Կ Ո Ւ

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԶԸՆԴԳՐԿՎԱԾ, ՕՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ, ՈՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է ՓՈԽԱՆՑԵԼ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

NN ը/կ	NN ը/կ Ծրագրին համապա- տասխան տողի համարը	Գույքի անվանումը	Գտնվելու վայրը	Մակերեսը (քառ. մետր)	Պետական կառավարման համակարգի մարմինը	Ծանոթություն
1	2	3	4	5	6	7
1.	1.	Տարածք	ք. Երևան, Նոր Նորք, Մուղովական փող., 29/4 շենք, 1/5	36.2	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 21.12.2022թ. N355-Ա հրամանով 16.01.2023թ. աճուրդով օտարվել է:
2.	10.	Աշտարակի նախկին բժշկական կենտրոնի հիմնական մասնաշենք	ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Նարեկացու փողոց	1793.3	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	Կառավարության «Գույք նվիրաբերելու մասին» որոշման նախագծով նախատեսվում էր նվիրաբերել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքին՝ շախմատի ակադեմիա հիմնելու նպատակով, ֆին. կոմիտեի 07.03.2023թ. նիստի հարց 11, նախագիծը հանվել է Ֆին. կոմիտեի նիստի օրակարգից՝ շախմատի ակադեմիա կառուցելու անհրաժեշտության բացա- կայության պատճառով: Նախագիծը չըջանառությունից հանվել է:
3.	22.	Նախկին ծննդատան շենք	ՀՀ Արտաշատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի փ .23	7 179.9	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	Գույքի հասցեն փոխվել է՝ դարձել է Ա. Խաչատրյան փողոց 116/1, ցանկի՝ (84-րդ կետ), որը Կառավարության 19.10.2023 թ. N1785-Ա որոշմամբ ներկայացվել է օտարման՝ աճուրդով:

4.	24.	Հրշեջ կայան	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Զիվանու փ., թիվ 64	1 330.78	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	Մշակվել և շրջանառու թյան մեջ է դրվել «Պետական գույքն օտարելու մասին» Կառավարության որոշման նախագիծ:
5.	25.	Կաթսայատուն, ավտոտնակ	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Զիվանու փ., թիվ 64/1	125.11	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	
6.	35.	«Լուսանշան» ՊՈԱԿ-ի նախկին գրասենյակ	ք. Երևան, Սեբաստիայի փող, թիվ 7	135.9	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	տրվել է վարձակալության
7	39.	Վարչական շենք	ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Գայի փողոց 9/2	461.58	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 03.03.2023թ. N92-Ա հրամանով աճուրդով օտարվել է:
8	40.	Ադմինիստրատիվ մասնաշենք	ք. Երևան, Սեբաստիա 1	249.7	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 26.05.2023թ. N237-Ա հրամանով աճուրդով օտարվել է:
9	43.	Թիվ 13 երաժշտական դպրոց	ք. Երևան, Կենտրոն, Իսակովի պ. 13	5778.7	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	Մշակվել և Կառավարության քննարկմանն է ներկայացվել «Պետական գույքն օտարելու մասին» Կառավարության որոշման նախագիծ
10.	44.	Նախկին ծննդատան շենք	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Սպանդարյան փ. 24	1108.56	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	Կառավարության 03.08.2023թ. N1291-Ա որոշմամբ աճուրդով օտարվել է:
11.	46.	Դպրոցի չհասգործվող շենք	ՀՀ Արագածոտնի մարզ, համայնք Վարդենիս, 10-րդ փողոց 14	2 695.21	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	Մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Պետական գույքն օտարելու մասին» Կառավարության որոշման նախագիծ

12.	47.	Հանգստյան տուն	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Գործարանային փողոց 9	5 730.41	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	Մշակվել և Կառավարության կողմից 31.08.2023թ. ընդունվել է «Պետական գույքն օտարելու մասին» N1472-Ա որոշումը, որը 09.11.2023թ. N1916-Ա որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել:
13.	49.	Շենքի բացվածք	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Թատերական փողոց թիվ 4	144.19	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 11.05.2023թ. N212-Ա հրամանով աճուրդով օտարվել է:
14.	50.	Ավտոտնակներ	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Հատիսի փ., թիվ 6/5	336.96 280.8	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 21.12.2023թ. N570-Ա հրամանով ներկայացվել է օտարման՝ աճուրդով:
15.	51.	Զորամասի տարածք	ք. Երևան, Արշակունյաց պողոտա 4/1	15 122.83	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	Կառավարության 07.09.2023 թ. N1528-Ա որոշմամբ մրցույթով օտարվել է:
16.	52.	Շենքի 9-րդ հարկից 2 սենյակ	ք. Երևան, Կիևյան 16 շենք 9/2	237.9 (որից 169.9 ընդհանուր համատեղ սեփական.) 68.0 սեփականություն	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	Կառավարության 30.03.2023թ. N422-Ա որոշմամբ ներկայացվել է օտարման աճուրդով, հայտեր չլինելու պատճառով չի օտարվել:
17.	55.	Հողամաս	ք. Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 64/14	2 000	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	Մշակվել և Կառավարության քննարկմանն է ներկայացվել «Պետական գույքն օտարելու մասին» Կառավարության որոշման նախագիծ:
18.	56.	Նախկին հիգիենիկ կենտրոն	ՀՀ Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Շամալյան փողոց 2/1	2 977.8	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	Կառավարության 21.04.2023թ. N569-Ա որոշմամբ մրցույթով օտարվել է:

19.	57.	Շենք- շինություններ	ՀՀ Կոտայքի մարզ, Ակունք համայնք, գյուղ Նոր Գյուղ 1-ին փողոց 7	11603.74	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	Կառավարության 11.08.2023թ. N1342-Ա որոշմամբ մրցույթով օտարվել է:
20.	58.	ՊՆ ընդունած հողամասեր	ք. Երևան, Մալաթիա Սեբաստիա, Բսակովի պողոտա 17/2, 17/5, 17/7, 22/5 և 17/178	16985.49 48600.0 9240.0 5844.0 12756.0	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	
21.			1) 17/2 հասցեում գտնվող հողամաս	1.698549	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	Կառավարության 22.06.2023թ. N999-Ա որոշմամբ ներկայացվել է օտարման մրցույթով, հայտեր չլինելու պատճառով չի օտարվել, Կառավարության որոշման նախագծով ներկայացվել Կառավարության քննարկմանը, որը չի ընդունվել:
22.			2) 17/5 հասցեում գտնվող հողամաս	4.86	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	«Պետական գույքն օտարելու մասին» Կառավարության որոշման նախագծով ներկայացվել է Կառավարության քննարկմանը, որը չի ընդունվել:
23.			3) 17/7 հասցեում գտնվող հողամաս	0.924	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե	Կառավարության 22.06.2023 թ. N995-Ա որոշմամբ ներկայացվել է օտարման՝ մրցույթով, հայտեր չլինելու պատճառով չի օտարվել, Կառավարության որոշման նախագծով ներկայացվել է Կառավարության քննարկմանը , որը չի ընդունվել:
